ILOAIDS

Международная организация труда

Սկսիր քեզանից – ապրիր և աշխատիր անվտանգ

Այսօր բոլորը գիտեն, որ ՄԻԱՎ-ը մարդու իմունային անբավարարության վիրուսն է, և դրանով վարակվելու դեպքում ժամանակի ընթացքում կարող է զարգանալ ՁԻԱՎ-ը՝ հիվանդության մահացու վտանգավոր փուլը: Շատերը կմտածեն՝ ես ինչ կապ ունեմ դրա հետ: Բանն այն է, որ ՄԻԱՎ վարակը դա երիտասարդների հիվանդություն է, չ՞է որ ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող անձանց 80%-ը 15-ից 30 տարեկան երիտասրդներ են:

Այդ տարիքում ենք մենք ընդունում պատասխանատու որոշումներ. ընտրում ենք մեր մասնագիտությունը, կյանքի ուղեկցին, կառուցում ենք մեր աշխատանքային և անձնական կյանքը: Սակայն կյանքի այս պլանները կարող են փլուզվել, եթե նույն այդ ուշադրությամբ չվերաբերվենք մեր սեփական առողջությանը:

Ի՞նչ է նշանակում պատասխանատվությամբ վերաբերվել սեփական առողջությանը: Դրա համար բոլորովին պարտադիր չէ խորացված մասնագիտական գրականություն ուսումնասիրել կամ ունենալ հատուկ կրթություն, պարզապես պետք է երիտասարդ տարիներից առողջ ապրելակերպ վարել և հոգալ սեփական առողջության մասին: Խուսափել ՄԻԱՎ վարակից ավելի հեշտ է, քան հարբուխից:

ՄԻԱՎ-ով վարակվելու ուղիները.

- չպաշտպանված (առանց պահպանակի) սեռական հարաբերություն
- ներարկիչների, ասեղների և այլ ներարկիչ սարքերի համատեղ օգտագործում
- վարակի փոխանցում ՄԻԱՎ-դրական մորից երեխային՝ հղիության, ծննդաբերության և կրծքով կերակրելու ժամանակ, ՍԱԿԱՅՆ՝ համապատասխան պաշտպանիչ միջոցների կիրառմամբ երեխային վարակելու ռիսկը նվազում է ընդհուպ մինչև զրոյի:

Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) առկայության դեպքում սեռական կապերի ժամանակ ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը ավելանում է 2–5 անգամ: Հատկապես վտանգավոր է, երբ ՍՃՓՎ-ները ուղեկցվում են փոքր, բաց խոցերի առաջացմամաբ (օրինակ՝ հերպեսի դեպքում):

ՄԻԱՎ-ը ՉԻ ՓՈԽՆՑՎՈՒՄ՝ ընդհանուր սենյակում աշխատելու ժամանակ, ձեռք սեղմելու միջոցով, ընդհանուր սպասքի, զուգարանի, սրբիչի, ընդհանուր սննդամթերքների օգտագործման դեպքում, միջատների խայթոցի, համբույրների և գրկախառնությունների միջոցով, ՄԻԱՎ-ով վարակված մարդուն խնամելու դեպքում:

ԻՄԱՑԻՐ՝ ՄԻԱՎ վարակ ունեցող գործընկերների հետ աշխատելը բացարձակապես անվտանգ է:

Թեստավորում

Շատ մարդիկ, ովքեր ապրում են ՄԻԱՎ-ով, չգիտեն այդ մասին: Նրանց մոտ չկան որևէ ախտանշաններ, վիրուսը ոչ մի կերպ իրեն չի արտահայտում: Սակայն, հետագայում ՄԻԱՎ-ը կարող է բերել ՁԻԱՀ-ի:

Թեստերի անցկացումը տալիս է երկու մեծ առավելություն. դուք կարող են ճշգրտորեն իմանալ ձեր կարգավիճակը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝

- եթե ՄԻԱՎ-ի թեստի արդյունքը բացասական է, ապա դուք կարող եք նախապես մտահոգվել այն մասին, որ ապագայում ձեզ և ձեր մոտիկներին պաշտպանեք վարակից
- եթե ՄԻԱՎ-ի թեստի արդ-յունքը դրական է, ապա դուք կարող եք իմանալ, թե ինչպես պահպանել ձեր առողջությունը և աշխատունակությունը:

Թեստերի անցկացման սկզբունքները.

■ Կամավորություն

Աշխատանքի ընդունման մասին դիմում ներկայացրած կամ արդեն աշխատող անձինք պարտավոր չեն պարտադիր կարգով ենթարկվել սքրինինգի՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առկայության հետազոտման: *(Աշխատանքի Միջազգային կազմակերպության (ԱՄԿ) գործնական կանոնների ժողովածու՝ նվիրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին աշխատանքի ոլորտում)*

■ Գաղտնիություն

Աշխատողի անձնական տվյալների հասանելիությունը կապված նրա մոտ ՄԻԱՎ վարակի առկայության կամ բացակայության հետ պետք է որոշվի գաղտնիության կանոններով: *(Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) գործնական կանոնների ժողովածու՝ նվիրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին աշխատանքի ոլորտում)*

■ Թեստավորումը պետք է ուղեկցվի խորհրդատվությամբ

Խորհրդատվությունը անց է կացվում ՄԻԱՎ-ի անալիզից առաջ և հետո: Ձեզ մանրամասն կբացատրեն, թե ինչումն է կայանում թեստավորումը, ինչ է նշանակում ՄԻԱՎ-դրական կամ ՄԻԱՎ-բացասական կարգավիճակը, և, ամենակարևորը՝ որ ծառայությունները կարող են օգնություն տրամադրել:

Թեստավորումը ճանապարհի միայն սկիզբն է: Այն թույլ է տալիս ձեզ իմանալ, թե ինչ է անհրաժեշտ դրական և պատասխանատու կյանք շարունակելու համար՝ ՄԻԱՎ-ով, կամ առանց ՄԻԱՎ-ի:

Ստանալ խորհրդատվություն առողջ ապրելակերպի հարցերի և ՄԻԱՎ-ի և ՍԵՓՎ-ի մասին կարելի է ՁԻԱՀ-ի դեմ պայքարի կենտրոններում: Այնտեղ կարելի է նաև ստանալ տեղեկություններ ճիշտ սննվելու, հանգստի և այն տեսակի վարակներից պաշտպանվելու մասին, ինչպիսիք են թոքախտը, որի նկատմամբ ՄԻԱՎ- դրական անձինք ավելի խոցելի են:

ՄԻԱՎ և ՁԻԱՀ

ՄԻԱՎ-ը դա վիրուս է, որն ընկճում է իմունային համակարգը, իսկ ՁԻԱՀ-ը հիվանդությունների մի համալիր է, որն առաջանում է ՄԻԱՎ-դրական մարդու մոտ ցածր իմունիտետի դեպքում:

Բուժման բացակայության դեպքում ՄԻԱՎ-ը կարող է բերել ՁԻԱՀ-ի, երբ մարդու մոտ զարգանում են մեկ, կամ մի քանի շատ լուրջ հիվանդություններ:

Բուժում

Այն մարդկանց համար, ովքեր ապրում են ՄԻԱՎ-ով, կենսականորեն կարևոր է ստանալ հատուկ հակավիրուսային թերապիա:
Հակավիրուսային դեղամիջոցները ի վիճակի չեն լիովին ոչնչացնել վիրուսը, սակայն դրանք նվազեցնում են նրա պարունակությունը արյան մեջ մինչև այնպիսի մի մակարդակի, որը թույլ է տալիս մարդուն ապրել լիարժեք և ակտիվ կյանքով. աշխատել ըստ մասնագիտության, ունենալ ընտանիք և առողջ երեխաներ:

Քո ապագան քո ձեռքերում է
Սկսի՛ր քեզանից – ապրի՛ր և աշխատի՛ր անվտանգ:

ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասցեն: 0040, Երևան, Աճառյան փող., 2 շենք (համայնք՝ Ավան)

Հեռ. (+37410) 610730,

(+37410) 617107

Ֆաքս.(+37410) 615746

էլ. հասցե՝ **armaids@armaids.am**

Թերթիկը հրատարակված է, “Ճգնաժամից դեպի արժանապատիվ և ապահով աշխատատեղեր” նախագծի ֆինանսական աջակցությամբ, որն իրագործվում է Ֆինլանդիայի Արտաքին Գործերի Նախարարության և ԱՄԿ-ի միջև և կնքված համաձայնագրի շրջանակներում: